

տրաստի ունէր երեսուն հազար ամէնէն ընտիր հետեակներ և չորս հազար ձիաւորներ¹, և անոնցմով բռնած էր սահմանազուլիւր. սակայն մեծ նեղութիւն կը քաշէր պաշարներու նկատմամբ իր թագաւորութիւնն ամբողջ Լուկուլիոսէն ապակա նուած ըլլալով. այնպէս որ շատերը կը ջանային թշնամոյն կողմն անցնել, բայց եթէ Միհրդատ իմանար և բռնէր, ամենախիստ տանջանաց կ'ենթարկէր զանոնք, զոմանս կուրացուցած կախաղան կը հանէր, ուրիշներն ալ ողջ ողջ կ'ալրէր. Եւ այս՝ տանջանաց սարսափը շատերը կասեցուց զաստիքը փախչելէ. սակայն ինքն ալ նուազ տագնապած չէր սովի սարսափին:

98. — Ուստի դեսպանութիւն ղրկեց առ Պոմպէոս իմանալու համար թէ ինչ պայմաններով կրնային խաղաղութիւն կրնալ, և Պոմպէոս պատասխանեց որ հաշտութիւն կ'ընէր եթէ ետ տայ հողմայեցի դասալիք փախստականները և ինքզինքն ալ Հռովմայեցւոց տրամադրութեան ենթարկէ: Միհրդատ լսելով զայս հաղորդեց իրեն ըով զտնուող փախստականներուն որոնք սարսափահար մնացին: Այն ատեն թագաւորն երդունցաւ որ բնաւ հաշտութիւն պիտի չընէ Հռովմայեցւոց հետ, անոնց անյազ ագահութեան պատճառաւ. և ոչ զորք պիտի մատնէ անոնց և թէ պի-

տի չընէ բնաւ ինչ մը որ իրենց հասարակաց օգտին համար չըլլայ: Մինչ այս, Պոմպէոս դարանի դնելով ձիաւորաց մաս մը, միւս մասը յայտնապէս ղրկեց թագաւորին յառաջապահ գունդերուն դէմ, հրամայելով որ զանոնք պատերազմի զգոռն և փախչին, իրեւ թէ պարտուած ըլլան: Կատարուեցաւ զբզուրութիւնը և փախան՝ թշնամին իրենց ետէն ձգելով, երբ Պոմպէոսի դարանակալ գունդերը շրջապատեցին զանոնք և փախցուցին մինչև իսկ բուն իրենց ճամբարները, որոնց մէջ ալ թերեւ մտած կ'ըլլային փախստականներուն հետ, եթէ Միհրդատ առաջուց գուշակելով զայս՝ հետեակախուսէր յառաջ չխաղցունէր. Ուստի Պոմպէոսինք ետ քաշուեցան. այս եղաւ ելքն Պոմպէոսի և Միհրդատայ միջև առաջին մարտափորձի, կամ մանաւանդ՝ առաջին ձիաւորաց ճակատամարտի:

Հ. Յ. ԱԻԳԵՐ

ՃԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. ԳՐՈՅ

ԸՍՏ ՀԱՅԿԱՅ ԵՐԶԱՆԻՒ

(Shu էջ 65)

չատ գեղեցիկ գործ կ'ըլլար եթէ գտնուէր մէկն որ այս երեք Միհրդատեան պատերազմաց պատմութիւնը, զոր շատ գեղեցիկ կերպով նկարագրած ու ներկայացուցած է Արիարնոս, ամբողջովին հայերէն թարգմանէր: Արեւելեան պատմութեան համար հետաքրքրական են նաեւ իւր Աղտրական պատերազմաց պատմութիւնը, ինչպէս Պարսկականքն ալ, թէպէտեւ անվաւեր են և Արիարնոսի չեն պատկանիր:

1. Ձիաւորաց թիւը կիսով նուազ կը յիշատակուի Պլուտարքոսի ջով ուր փոխանակ չորս հազարի կը կարդանք միայն երկու հազար:

Յետ առաջին մասին մէջ պատճառաւորանութեամբ ցոյց տալու թէ իսրայելացիք չորս հարիւր տարի չիկեցան Եգիպտոսի մէջ, կը մնայ հիմայ ութերորդ զլիւոյն վերջակէը դնելու համար՝ ապացուցանել այս երկրորդ մասովը թէ չորս հարիւր տարին որ յիշատակուած է Արեւհատու տեսիլքին մէջ, պէտք է այս տեսիլքին ճիշտ ժամանակը առնուլ իբր մեկնակէտ, և անկից սկսեալ մինչև իսրայելացւոց Եգիպտոսէն ելլելու ժամանակը չորս հարիւր տարի հաշուել:

Այս մասին մէջ ժամանակագրիներու կարծիքները կը տարբերին իմ կարծիքէս, վասն զի ոչ մէկ տարւոյ, այլ քսան տա-

ընկերու տարբերութիւն մը կը դնեն, այսպէս, Եւսեբիոս, Ելից նախադրութիւնը գրողն, Բոսուէտ, և «Արուեստ ճշգիւյզ զթուականս» ի հեղինակքն¹, և ասոնց հետեղներն բնականաբար:

Բայց մեր այս կարծիքը ապացուցանելէ առաջ փսոնց կարծիքը յիշատակենք: Ելից նախադրութիւնը կը վերջացնէ. «Եւ ունի զիրք Ելից պատմութիւն ժամանակի հարիւր քառասուն և վեց ամաց», որովհետեւ այս գիրքը գրուած է Իարայէլի Եւգիպտոսէ ելլելուն երկրորդ տարին, ինչպէս կը կարդանք (Ելք Խ. 14, 15) «Եւ արար Մովսէս ըստ ամենայնի զոր միանգամ պատուիրեաց նմա Տէր, նոյնպէս և արար: Եւ եղև յամսն աստուծոյ յամի երկրորդի ելանելոյ նոցա յերկրէն Եգիպտացոց» յամամտին կանգնեցաւ խորանն: Դարձեալ, այս ժամանակէն ամիս մը վերջն է որ թուոց գրեցն կը շարունակէ պատմութիւնը. «Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի՝ յանապատի Սինայի, ի խորանին վկայութեան ի միտմ ամսն երկրորդի, յամի երկրորդի ելանելոյ նոցա յերկրէն Եգիպտացոց» (Թիւք Ա. 1): Ուստի հարկ է հարիւր քառասուն և վեց թիւէն մէկ տարի հանել, մեր ժամանակագրութեան հետ բազդատութեան մէջ դնելու համար, վասն զի մեր նպատակն է գտնել Արահամէն մինչև Եգիպտոսէն ելլելու ժամանակամիջոցը: Արդ փոխանակ հարիւր քառասուն վեց տարիի, ըստ նախադրութեան Ելից, մենք հարիւր քառասուն և հինգ տարի պէտք ենք հաշուել: Սակայն և այս հարիւր քառասուն և հինգ տարի ժամանակամիջոցն անգամ, Յովսեփայ մահուանէ մինչև Մովսէսի ութսուններորդ տարին, քսան և մէկ տարի աւելի երկար է քան ինչ որ մեր ժամանակագրութեան մէջ պիտի տեսնենք:

Պուարսոն և Քէյ՝ և այլք, «Արուեստ ճշգիւյզ զթուականս» ին հեղինակներն,

այս միջոցս վեց հարիւր երեսուն վեց տարի կը հաշուեն: Սակայն այս թուականին սխալ ըլլալուն վրայ խօսիլ անգամ չարժեք, նախ որ սուրբ Գրոց թուականին յայտնապէս կը հակասէ, դարձեալ, բաւական է յիշատակութիւնն ընել վերոյիշեալ հեղինակաց մէկ կէտին, անոնց անհեթեթ սխալը ցուցնելու համար. արդ կ'ըսեն. Ամրամ՝ Մովսէսին հայրը, 2016ին Ն.Ք. ծնած է, իսկ Մովսէսին ծնունդը 1725ին կը դնեն, որով Ամրամ երկու հարիւր ինսուն և մէկ տարուան եղած ժամանակը կը ծնանի զՄովսէս, բայց աւելի զարմանալին այս է որ Ամրամ՝ ըստ այս «Արուեստ ճշգիւյզ զթուականս» ի հեղինակաց, կը մեռնի 1879ին, իսկ Մովսէսի ծնունդը էր 1725ին, որով Մովսէս կը ծնանի հօր մահուրէն հարիւր յիսուն և չորս (154) տարի վերջը, արդ ինչ զաղափար կրնայ կազմել մարդ այս թուականին ճշդութեան վրայ, կը թողուի խորհրդածել ընթերցողաց: Ուստի թուականի այսպիսի մեծ վրիպակ մը ինչ կերպով ալ յառաջ եկած ըլլայ, իբր մեր կարծեաց հակառակ փաստ բոլորովին անզօր կը մնայ:

Բայց Եւսեբիոսի նշանակած թուականը ինչպէս նաև Ելից նախադրութեանը խնդրոյ նիւթ է, և ճիշտ թուականը գտնելու համար հարկ է ոտն առ ոտն յառաջ երթալ:

Ուսկից ծագում առած է հարիւր քառասուն հինգ (145) թուականը՝ որուն վրայ հիմնուած չորս հարիւր երեսուն (430) տարի կը դնեն Եւսեբիոս և Բոսուէտ, Արահամու աւետեաց թուականէն մինչև Իսրայելացոց Եգիպտոսէն ելլելու ժամանակամիջոցն: Այս հարիւր քառասուն և հինգ թիւը երկու մասի կրնայ բաժնուիլ, այսինքն, վաթսուն հինգ տարի՝ առաջին մասը, այսինքն, Յովսեփայ մահուանէն մինչև ծնունդ Մովսէսի, ու

1. L'Art de vérifier les dates հոշակաւոր գործ ժամանակագրական, Բենեդիկտեան կրօնաւորի մը աշ-

խատութիւն և յետոյ ի զանազանից լրացուած և հրատարակուած:

րուն մտացածին ըլլալը կանխաւ բացաւ տրած ենք արդէն, հետեւաբար կրկնաբար նութեան հարկ չկայ, կը մնայ երկրորդ մասը, թոյն է Մովսեսի ծննդենէն մինչև Ելքի թուականը Արդ Մովսէս ութսուն տարուան էր երբ իւրայիւացիներն Եգիպտոսէն հանեց. «Եւ Մովսէս էր ամաց ութսունից, և Ահարոն էր որդի ամաց ութսուն և երից յորժամ խօսեցան ընդ փառաւորի» (Ելք Է. 7). և նոյն տարւոյն պատէրին մեկնեցան Եգիպտոսէն, որով միշտ ութսուն տարուան մէջ կը համարուի Մովսէս, ուստի եթէ վերոյիշեալ Նախադրութեան 65 տարիներն 80ին վրայ աւելցընենք, 145 տարին կը լրանայ ըստ Նախադրութեան Ելից:

Եթէ այս հարիւր քառասուն հինգ տարուան ժամանակամիջոցն իբր ճիշտ ընդունինք՝ պիտի հակասենք սուրբ Գրոց բացատրութեան որ կ'ըսէ. «Գիտեալով զի տասնչորս զի պանդուխտ եղիցի զաւակ քո յերկիր որ ոչ իւր իցէ և ծառայեցուցեն զնոսա ամս չորեք հարիւր» (Ենդ. ԺԵ. 13), Մինչ Եւսերի իւր ֆրոնտիկոնին մէջ կ'ըսէ. «Գանդի այսպէս ասէ զիր. զոր բնակեցին յեգիպտոս և յերկիրն ֆանանացուց ինքեանք և հարք իւրեանց ամս Ն՛. (չորս հարիւր երեսուն)», Բովանդակ Ս. Գրոց մէջ չորս հարիւր երեսուն (430) թուոյն յիշատակութիւնը չենք գտներ, ո՛չ հայկական թարգմանութեան մէջ, և ոչ ութ լեզուան Ս. Գրոց մէջ՝ զոր Ս. Ղազարու մատենադարանին մէջ ունինք՝ Բայց պիտի ըսուի. Ուակի՞ց հաներ է Եւսերիոս, և ահա մի քիչ վար նոյն ֆրոնտիկոնին մէջ (էջ 74) կը գտնենք զըստը. «Եւ քանզի ընդ ամենայն Ն՛ (չորս հարիւր երեսուն) ամ յԱստուծոյ աւետեացն հետէ՝ որ եղեն յեթնութեանս երրորդում հինգերորդում ամի տիոց Արրահամու», ուրեմն ժամանակն հաշուելու մեկնակէտն Եւսերիոս Արահամու եօրանաներորդ հինգերորդ տարին՝ Աւետեաց ժամանակէն կը սկսի, մինչ մենք

Տեսիլքի ժամանակէն կը սկսինք հաշուել, այն է Արահամու ոչսունեցորդդ հիւզերորդ տարին, այնու հանդերձ դարձեալ քսանունէկ տարուան տարբերութիւն կայ:

Այս տարբերութիւնը կրնանք բացատրել, ենթադրելով որ ընդօրինակողին սխալմունքն ըլլայ, վասն զի եթէ Եւսերիոս գրած ըլլար Ս՛ (ՆԺ = 410) և ընդօրինակողն ՝ (10)ը կարծեալով թէ լ (լամու, այն է 30) ըլլայ, հետեւաբար գրած է τετρακχισια τριαχοντα այն է չորս հարիւր երեսուն, սխալն ընդօրինակողին կ'ըլլայ, և այս ենթադրութեամբ Եւսերիոս կ'արդարանայ, ուստի այս ենթադրութեամբ Արահամու ֆաղդէացուց երկուէն ելլելէն մինչև իսրայիլացուց Եգիպտոսէն ելլելու ժամանակամիջոցն (ՆԺ = 410) չորս հարիւր տաս տարի կ'ըլլայ. բայց մեր ժամանակագրութիւնը Արահամու տեսիլքի թուականին վրայ հիմնել ենք և այն տեսիլքի ժամանակը աւետեաց ժամանակէն տաս տարի վերջը կը պատահի, ուրեմն ըսել է թէ երկու թուականներն զուգընթաց կ'ընթանան:

Բայց Բուսուէն որ Եւսերի ընդօրինակեալ յայն ֆրոնտիկոնին հետեւած է կը ընէ. «Սկիզբն առնու ժամանակի զբաւոր օրինաց որ տուան Մովսեսի յամին չորս հարիւրորդի երեսներորդի կոյման Արահամու» (Խօսք ի վէպս ազգաց զար չորրորդ էջ 28). իւր սխալման կէտը կայացած է Յովսեփայ մահուան և Մովսեսի ծննդեան միջոցին վրայ, սակայն երբ հիմնուինք Սուրբ Գրոց յիշատակուած չորս հարիւր թուոյն վրայ, այնուհետև կրնանք ուղղել սխալմունքն:

Մենք հիմ պիտի առնունք Արահամու տեսիլքի թուականը, վասն զի Ս. Գիրքն իսկ այս ժամանակս կ'առնու իբր մեկնակէտ: Եւ արդարեւ զանազան անգամներ Աստուած խօսեցաւ Արահամու հետ. ինչպէս Ա. անգամ. «Եւ ասէ Աստուած ցԱրամ ել զու յերկրէ քուսմէ» (Ենդ. ԺԲ. 1). – Բ «Եւ ասէ Աստուած ցԱրամ յետ մեկնելոյն Ղովտայ ի նմանէ» (Ենդ. ԺԳ. 14). – Գ. «Յետ բանիցս այսոցիկ եղև

1. Հրատարակութիւն անգլ. Waltonի.

բան Տեառն առ Արամ ի տնայեան» (Ծնդ. ժԵ. 1). — Դ. «Եւ եղև Արամ ամաց իննսուն ինունց և երեցաւ Տէր Աստուած Աբրահամու» (Ծնդ. ժԵ. 1). — Ե. «Եւ երեցաւ նմա Աստուած առ կաղնեաւ Մամբրէի» (Ծնդ. ժԲ. 1). — Զ. «Եւ եղև յետ բանիցս այսոցիկ փորձեաց Աստուած զԱբրամ և ասէ ցնա» (Ծնդ. իԲ. 1):

Այս վկայութիւններէս կը տեսնուի թէ մի անգամ միայն տեւիք բառը յիշատակուած է իբր որոշիչ թուական մը, բայց որքան որ այս տեսիլքն կը շեշտուի, սակայն որոշ դրուած չէ թէ Աբրահամ քանի տարուան էր երբ տեսաւ այս տեսիլքը, ինչպէս որոշ կ'ըսէ. «Եւ զու յերկէ քում մէ... և Աբրահամ էր ամաց եօթանասուն և հնգից յորժամ եւ ի խառնէ» (Ծնդ. ժԲ. 1-4). ուր կը շեշտէ 75 տարուան ըլլալը, բայց տեսիլքի ժամանակին մէջ քնաւ յիշատակութիւն չընէր. Սակայն եթէ քիչ մը լրջօրէն քննենք կրնանք Աբրահամու տարիքը գտնել տեսիլք տեսած պահուն:

Համառօտիւ մը դէպքերը յիշատակենք. եօթանասունէնից տարուան էր Աբրահամ երբ խառնէն ելաւ և եկաւ բնակեցաւ Քանանացւոց երկիրը. Աբրահամու այս տարիքը նշանակուած է Ս. Գրոց մէջ. Սովի պատճառաւ Աբրահամ գնաց բնակեցաւ Եգիպտոս, բայց ո՞րչափ ժամանակ հոն կեցաւ և կամ Աբրահամ քանի տարեկան էր երբ Եգիպտոսէն մեկնեցաւ, նշանակուած չէ. Դարձաւ ապա Քանանացւոց երկիրը՝ ուր Ղովտայ՝ իր եղբոր-

որդւոյն հովիններն և իր հովիններն խնդիրներ կ'ունենային մէկմէկու հետ, և որպէս զի Ղովտ և Աբրահամ չաւրուին մէկմէկու հետ, սա կ'առաջարկէ բաժնուիլ իրարմէ, Ղովտ կ'երթայ Սոդոմ բնակելու. այս ժամանակիս թուականն ալ նշանակուած չէ. Ապա փողողագոմոր թագաւորը և իր նիզակակից թագաւորներն՝ Սոդոմացւոց և ասոնց դաշնակից ապստամբ թագաւորներուն վրայ պատերազմ կը բանան. «Զերկոտասան ամ ի ծառայութեան կացեալ էին փողողագոմորայ, և յերեք տասաներորդում ամին ապստամբեցին, և յամին չորեքտասաներորդի եկն Փողողագոմոր և թագաւորն որ ընդ նմա» (Ծնդ. ժԴ. 4, 5). Կը պարտուի Սոդոմայ Բաղակ թագաւորը և կ'իյնայ նաւթի հորի մէջ, «Եւ արքայ Սոդոմացւոց... և ճակատեցան ընդ նոսա ի պատերազմ ի ձորն աղտիցն. և ի ձորն աղտից ջրհորք, ջրհորք նաւթի: Եւ փախեաւ արքայ Սոդոմացւոց... և անկան անդր» (Ծն. ժԴ. 8-10), և Ղովտն ալ գերի կը տանին յաղթողներն. Աբրահամ կ'ազատէ զՂովտ խորտակելով Փողողագոմորը և իր նիզակակիցները: Եւ Սոդոմայ նոր թագաւոր՝ Մեթիսեղէկ որ միանգամայն քահանայ էր և Շաղիմայ՝ ալ թագաւոր՝ կ'օրհնէ զԱբրահամ հաց և զինի կը հանէ անոր «Եւ ետ նմա՝ տասանորդս յամինայնէ» (Ծնդ. ժԴ. 20). Ուստի Սոդոմացւոց թագաւորը կ'ըսէ. «Տուր ցիս զմարդիկդ և զաւարդ քեզ առ». Աբրահամ աւարին

1. Այս Շաղիմ կամ Սաղեմ անուն մեկնիլ կը նմարի թէ Երուսաղէմ ըլլայ, ևս այս մասին չեմ հաւատակիր. բայց Աբրահամու ժամանակ Երուսաղէմայ քաղքին օրիշ անուն ունեաց ցառայ Գիբթէն կըրնա՞նք հաստատել. «Եւ երեսն օտմանն ի ձոր որդոցն Ենոմայ ի թիկանց Յեբուսայ այն է Երուսաղէմ» (ցառ. ժԵ. 8). Իսկ Սաղեմ կար քաջ Սամարիայ մաս էր ուր ցառը իշխանեցաւ. «Եւ եկն ցառը ի Սաղեմ քաղք Ենոմայցւոց» (Ծնդ. ԼԳ. 18). Ուստի քանի որ Սաղեմ քաղք կար Քանանացւոց երկրին մէջ և Երուսաղէմ նիս ատեն ցառուայ կը կոչուէր, նոսաւ քար Սաղեմ կամ Սաղիմ կամ Շաղեմ՝ Երուսաղէմ

չկրնար ըլլալ. փնտաւորներու և աշխարհաշէտերու քննութեան կը թողունք այս կէտը չշարժել:

2. Նշանակելու է որ Շայ, Լատին և Սլաւոնական թարգմանութեանց մէջ Աբրահամու անունը այս վերջին թարգմանութեան մէջ չկայ, մինչդեռ Եբրայական բնաղբն, և թարգմանութիւնք Յոյն, Գերման, Անգլիական, Փաղղիական և իտալական կարծես Աբրահամու անունը մասնաւոր կերպով դրած են Պօղոս աստ. քերթն վրայ հիշուած. «Արդ տեսէ որպիսի ոք էր սա, որում և Աբրահամ տասանորդս ետ յաւարէ անոր» (Եբր. Է 4):

տասանորդը տուաւ Սողոմանցւոց թագաւորին, և Սողոմայ պատկանող բաժինէն իւրեն մաս չառաւ. վասն զի յաղթուող թագաւորներուն՝ այսինքն Քողողազոմուրայ և իր դաշնակիցներուն աւարը իրեն պահեց, և Սողոմայ թագաւորին պատասխանեց. «Եթէ ի շաղաթաթէ միտջէ մինչև ի խրացս մի կօշկաց առիցես յամենայնէ որ ինչ քո իցի... Բայց որչափ ինչ կերան մանկտիդ, և մասն արանցդ որ եկին ընդ իս՝ Աւան, Եսըող, և Մամբրէ, նոքա առցեն զբաժին իւրեանց» (Կրք. ԺԲ. 23, 24)։

Նշոյնպէս այս մեծ ղէպըն ժամանակն ալ նշանակուած է, թէպէտ ժամանակագիրը հաւանական թուական կը դնեն, որ ընդհանուր ժամանակագրութեան վրայ փոփոխութիւն չըրեր։

Եւ այս ղէպէն վերջը Աբրահամու տեսիլքին ղէպը կը պատմէ Խննդոց գիրքը ամբողջ ԺԵ. գլխոյն մէջ։ Եւ թէ այս տեսիլքէն անմիջապէս վերջն է որ Սառա, իր աղախինը՝ Հագար Եգիպտացին Աբրահամու կու տայ, ուսկից իսմայէլ կը ծնանի երբ Աբրահամ ութսունուկէ տասնական էր. «Եւ Աբրամ էր ամաց ութսուն և վեցից յորժամ ծնաւ նմա Ագար զիսմայէլ» (Կրք. ԺԶ. 11). ուստի ամենայն հաւանականութեամբ տեսիլք տեղի ունեցած պիտի ըլլայ Աբրահամու ութսուն հինգերորդ տարւոյն մէջ։

Արդ այս տեսիլքին ճիշտ թուականը գտնել վերջը կը մնայ ճշդել Յովսէփայ մահուընէն մինչև Մովսէսի ծննդեան ժամանակը, որ շատ դուրին է, վասն զի ծանօթ թուականները հանելով չորս հարիւրէն, որ է Աբրահամու տեսիլք տեսած ժամանակէն մինչև իսրայելացւոց Եգիպտոսէն ելլելու թուականը, մնացորդն է մեր փնտռած ժամանակն։

Երանօթ թուականներն են, նախ տեսիլքէն տասնուհինգ տարի վերջը կը պատահի իսահակայ ծնունդը, վասն զի նոյն ժամանակ Աբրահամ հարիւր տարուան էր ըստ Ս. Գրոց (Կրք. ԺԵ. 1). «Եւ եղև Աբրամ ամաց իննսուն ինունց»... «Եւ

զուխտ իմ հաստատեցից ընդ Սահակայ զոր ծնցի քեզ Սարրա ի ժամանակի յայսմիկ ի միսում տարու» (Կրք. ԺԵ. 21)։

Իսկ իսահակ վաթսուն տարուան էր երբ ծնան երկուորեակքն Եսաւ և Յակոբ. «Եւ իսահակ էր ամաց վաթսնից յորժամ ծնաւ զնոսա Ռեբեկայ» (Գրք. Կրք. ԺԶ. 24)։

Յակոբ իւր կարգին հարիւր երեսուն տարուան էր Փարաւոնին ներկայացած ժամանակ. «Եւ ասէ Փարաւոն Յակոբ. քանի՞ են ամբ աւուրց կենաց քոց։ Եւ ասէ Յակոբ Յարաւոն. աւուրց կենաց ամաց իմոց զորս պանդխտեցայ՝ հարիւր և երեսուն ամ է» (Կրք. ԺԵ. 8, 9). Իսկ Յովսէփ այս ժամանակ երեսուն և իննեւորդ տարւոյն մէջն էր. այսպէս կրնանք հետեցնել, վասն զի կ'ըսէ (Կրք. Գրք. Գլ. ԽԱ. 46 համարին մէջ). «Եւ էր Յովսէփ ամաց երեսնից յորժամ ընծայեցաւ առաջի Փարաւոնի»։ Այնուհետև լրութեան եօթն տարիներն կ'անցնին, և սովոյն երկրորդ տարին կը կանչէ Յովսէփ իւր հայրը և եղբայրը Եգիպտոս, որով Յակոբայ հարիւր և երեսուն տարեկան եղած ժամանակ Յովսէփ երեսուն և ինն տարուան մէջ կ'ըլլայ։ Եւ յայտնի բան է որ անկից մինչև իւր մահը եօթնասուն մէկ տարիներ անցան, քանի որ նա հարիւր տասն տարուան կը վախճանի. «Եւ վախճանեցաւ Յովսէփ ամաց հարիւր և տասանց» (Կրք. Կր. 25)։ Որով համազումար Աբրահամու տեսիլքէն մինչև Յովսէփայ մահը երկու հարիւր եօթնասուն և վեց տարի կ'ընէ։ Այս թուականին վրայ տարալոյս չկայ բնաւ, վասն զի ուրոյ է և բացայայտ, որով չորս հարիւր տարին լրանալու համար կը մնայ հարիւր քսան չորս տարի եւ, և այս 124 տարիներուն մէջ ութսուն տարին յայտնի է, այն է Մովսէսի տարիքը այն ժամանակ որ իսրայելացիներն Եգիպտոսէն հանեց։ Տարբերութիւնն է քառասուն չորս տարի՝ և այս 44 տարիներն կը կազմեն Յովսէփայ մահուանէ մինչև ցծնունդ Մովսէսի անցած ժամանակամիջոցն, զոր կը փրն-

տոէինք, կամ ինչպէս վերը յիշատակեցինք
«400 — (276 — 80) = 44»:

Ուստի Աղամէն մինչև խորայնացուց
Եզրիպտոսէն ելլելու թուականը, ըստ մեր
ժամանակագրութեան ամբողջացնելու հա-
մար, պէտք է աւելցնել միայն 124 տա-
րիներն քանի որ կանխաւ հաշուած ենք

276 տարիներն 3759 թուականին մէջ,
որով Աղամէն մինչև Ելք երեք հազար
ութ հարիւր ութսուն երեք (3883) տա-
րիներու շրջան մ'է:

Հ. ԽՈՐԷՆ Ս.

Շարայարելի

Մ Ո Ռ Ա Յ Ո Ւ Ա Մ

Բ Ա Յ Յ Ա Ն Մ Ո Ռ Ա Ն Ա Լ Ի

Յ Ո Ւ Ե Ւ Կ Ն Ե Ր Ի

Հաւաքածոյիս մէջ՝ հնագոյններու հետ կան նաև նորեր: Ոչ ինչ արհամարհած
եմ՝ յիշելով որ քարածուխէն աղամանդներ կը ծնանին, (և թէ՛ երէկուան նորը՝ այ-
սօր հին մ'է արգէն, ու պահիկ մ'առաջ անմրցակից Բելզիան՝ կրնայ ժամ մը յետոյ
աւերակոյտ մը ողորալ)... Ի նկատի առած եմ միանգամայն ընթերցողաց ճաշակնե-
րուն բազմապիսի զանազանութիւնները՝ ինչպէս նաև աշխարհներու իրարմէ ունեցած
բացածիգ հեռաւորութիւնները՝ ուր հայերէն գրքերը թափառելու ճակատագրուած են,
որով... պէսպիսութեանց դաշնակցութիւն մը:

Եթէ արևմտաբանկ հայեր էք դուք՝ և կը փափաքիք ձեր արեւելաբանակ ազգա-
կից ժողովրդեան մտաւոր զարգացումը իմանալ, խփեցէք գրքերը՝ («Ինտէլիկէնտ»ներն
են անոնք), մտէք գերեզմանոց՝ ուրտեղ միայն պիտի գտնէք զինքը՝ զանգուածը ժո-
ղովրդեան՝ անսեթեմեթ, ինչպէս որ է. այնտեղ յստակ կը նշմարուի ճիւղաւորումը
իւր ամէն երակներուն. մտերմաբար կը խօսի, անկեղծօրէն պարզելով իւր զգացում-
ները բովանդակ: Իսկ դուք՝ մինչ կը հայրէք և կը լսէք՝ ի՞նչ պիտի խորհրդածէք. —
թէ՛ Ռուսահայ ժողովրդականութիւնը՝ նկատմամբ ազգային գրագիտութեան՝ դեռ
քանի մը խղճուր քայլեր պէտք է առնէ՝ որ, այդ ճամբուն վրայ՝ այնուհետեւ տաճ-
կահային հետ զուգընթանալ կարենայ:

Տապանագրութեանց մէջ՝ առհասարակ՝ տարրական ուսմունքն իսկ թերի է. ոչ
ուղղագրութիւն՝ ոչ ալ գեղարուեստական ճաշակ կայ, այլ մերթ այնպիսի խոթոռ
տողադարձներ ու փորագրութիւններ՝ որոնց այլանդակութեանը մասին քարերն իսկ
կը բողոքեն:

Նախնեաց քով՝ խելառ տողադարձները այն արդարացումն ունին որ անոնք
մինչև ի սպառուած կը գրէին, որով սահմանէն դուրս մնացած նուն՝ օրինակի հա-
մար, կը ստիպուէին յաջորդ տողին անցնել, սակայն այս վերտառութիւնները՝ չունին
նոյն իրաւունքը. շատ անգամ՝ մինչ աչքն իսկ կարող էր հմուտ ուսուցիչ մ'ըլլալ՝
թէ այս ինչ գիրը կամ նոյն իսկ ամբողջ բառ մը՝ պէտք էր նախորդ տողին վրայ գրը-